619 Թե մեղավոր ես զգում քեզ, ուրեմն կապրես,

1. Թե մեղավոր ես զգում քեզ, ուրեմն կապրես,
Քո Հոր փառքը դու երկնքում հավերժ կտեսնես,
Իսկ թե անձդ դու բարձրացնես, էլ չես ապրելու,
Հպարտ մարդը հույս չունենա Հորը տեսնելու:

2. Թե մեղք ունես, խոստովանի՛ր, քեզանից վանի՛ր,
Թե պարտք ունես ինչ-որ մեկին, տո՛ւր, մի՛ մոռացիր,
Ժամանակը լրանում է, Հիսուսն է գալու,
Ով արժանի է փրկության, նա է գնալու:

3. Թե ինչ-որ բան գողացել ես, ետ վերադարձրո՛ւ,
Եթե ինչ-որ բան ես ուզում, Հոգուն հարցրո՛ւ,
Թե քեզ Նա չի առաջնորդում, լռի՛ր, մի՛ խոսիր,
Ուրեմն՝ քո Հոր կամքը չէ, հեզությամբ սպասի՛ր:

4. Թե քո սրտում չար բաներ կան, մի՛ թող, որ մնան,
Մի՛ թող՝ քո և Աստծո միջև խոչընդոտ դառնան,
Թե չէ հետո ուշ կլինի՝ քո Փրկչին տեսնես,
Նրա գալուստը շատ մոտ է, ի՞նչ ես լուռ նստել:

5. Թե ատում ես ինչ-որ մեկին, սովորի՛ր սիրել,
Թե դատում ես ինչ-որ մեկին, աշխատի՛ր ներել,
Քո հին մարդը պիտի տեսնես Տիրոջ հետ խաչված,

Իսկ նոր մարդը պիտի ապրի Սուրբ Հոգով լցված: